

ՅԵՒԵՂՈՒԵՐ



ԹԻԻ Ը, 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1867

ԼՈՒՐ ԱՒԵՏԵԱՅ Ի ՀԵՊԻՇՍՏԵՆԻ

ՍՈՒՐԲ ԼՅԹՈՒՅՍ միաբանական ուխտին և նորա հոգեւոր Ղլխոյ Լճնապատիւ Սրբազան Պատրիարք Հօր ազօթքն ու աղաչանքները, զոր անդադար կը նուիրեն առ բարեգութ մարդասէրն Լստուած, վերջապէս լսելի եղան Նորա առջեւն : Լնցեալ ամսոյ 29 ին կ'իմացընէր, մեզ Լղէքսանդրիոյ մեր Թղթակիցը՝ Թէ Պօլիսէն հեռադրաւոր գալով տեղւոյն Լնգղիական հիւպատոսարանը, կ'աւետէր Հայեշրատանի մէջ անգղիացի բանտարկեաց ազատութիւնը՝ միջնորդութեամբ Լրուսաղէմէ դնացող Իսահակ եպիսկոպոսի : Լքելու օրէն յետոյ Ճիտոէն վերադարձող բէթլէէմցի մի նոյն համբաւը Ճիտոէի մէջ եւս տարածայնուիլը մեզ կ'իմացընէր : Լյս աւետեաց ձայներն որչափ որ սիրելի էին մեզ և քաղցր մեր լսելեաց, այսու աւմենայնիւ կամ պաշտօնական ըոյ և կամ ուղղակի Հայեշրատանէն եկած նամակի մի կը սպասէինք հասարակութեան բերանն եղած համբաւներն ե

րաշխաւորելու և ստուգադոյն տեղեկութիւն ստանալու : Լս ահա Լստաւրիական շոգենաւով ամսոյ 2 ին Պօլսոյ մեր վոխանորդարանէն եկած նամակ մի կը հաստատէ զայն, ի կողմանէ Լնգղիոյ Վսեմախալ դեսպանին առ Լճնապատիւ Պօլսո Սրբազան Պատրիարքն հաղորդուած հեռագրական ըրովը : Կը յուսամք որ մտերա Վեր. Իսահակ Լքքեպիսկոպոս Սրբազան Հօր կողմէն եւս մանրամասն տեղեկութիւններ կը ստանամք և մեր արգոյ ընթերցողաց կը հաղորդեմք : Լու այժմ յիշեալ Սրբազանին և իւր ընկերակից եղող Լքթ. Տիմոթէոս սուրբ հօր նուիրակութե գործն պատկուած համարելով համեմատ դեսպանական ազդարարութե, այն դործոյն վերայ քանի մի խօսք խօսիլ արժան կը համարիմք :

Լյսպիտի առաջարկութիւն մի և խնդիր մի զոր Լնգղիոյ նման հզօր տեղութիւն մի ըրուա Հայ ազգին և նորա հոգեւոր Ղլխոյն, մեծ նշանակու

Թիւն մի ունի ինքնին, և ինչպէս Անգլիոյ բարձրագոյն խորհրդարանաց արձանագրութեանցն և տարեգրութեց, նոյնպէս և մեր ազգային պատմութե մէջ յիշատակութեան արժանի կը համարի: Հայ ազգը իւր հոգեւոր իշխանութեան միջոցաւ, ըստ որում առնով և եթ ճանչցուած է իբրեւ ազգ կամ իբրեւ քրիստոնեայ հասարակութիւն, այնպիսի ծառայութիւն մի կը կատարէ՝ որ թէպէտ և ըստ ինքեան և ըստ մեզ փոքրիկ, այլ ըստ նպատակին մեծ և վսեմ, որովհետեւ մեծ փութորիկ մի կը փարատէ քաղաքական հոբիւսնին վերայէն, որ սկսած էր իւր ազառնակներէն ցոյց տալ: Թէոդորոս Վահագմաւ Կայսեր գաւազանը եթէ ոչ կորստեան՝ անշուշտ ջախջախելու վտանգի մէջ կը համարուէր: Անգլիոյ տէրութիւնը մեծ ծախսեց դուռ մի պիտի բանայր, և երկու կողմէն շատ արիւնհեղութիւն պիտի ըլլար: Այս կապով մի և վարդապետ մի Հայրապետական օրհնութեան կոնդակ մի և աղերսանաց թուղթ մի՝ իբրեւ Ահարոնի բուրվառն ձեռուրին առած կը մոնեն մեռելոց և կենդանեաց մէջ տեղ, առաջնոյն գիւրախորտակելի գաւազանը ի մօտալուտ կորստենէ ազատելու և երկրորդին՝ իւր սուրբներուն եւ թնդանութեան հարուածները խեղճ և գթութեան արժանաւոր անձանց վերայ փորձել չտալու, այլ պահել իւր նիւթական կարողութիւնը բարոյական վեհանձնութեամբ մի, և ասով Հայ եկեղեցականութիւնը փառաւորել ընդհանուր աշխարհիս առջեւ, և ազգայնոց ոմանց ձախող և մոլոր կարծիքներն փարատել՝ զոր անիրաւար կը կրեն երկու անշահատէր, անձնանուէր և անձնուրաց եկեղեցականաց դէմ, թէ ի պարծանս ընդհանուր Ազգին և թէ ի պատիւ սուրբ

Լթոռոյ և նորա ասրժաննիւր Պահակային, այս օրինակ փոսնդ մի յանձն առին, սպառնելով որոյ Ախտիս ընթանանդ աղօթիցն և աստուածային ողորմութեան:

Անգլիացի վեհադպէս և իւր մեծագորտէրութիւնն այսպիսի զոհողութեան մի արժէքն լաւ իմանալով, արդէն ամիս մի կայ որ փութացած է իւր արտաքին պաշտօնէին ձեռք յայտնել առ՝ Վմեն. Կայսի Սրբազան Պատրիարք Հայրն միջոցաւ Կ. Պօլսոյ իւր վսեմախայլ Վեսպանին, որուն խնայրնելով Սրբազան Հօր կողմէն Սիօն ամառութեթից ընդունիլը, որոյ մէջ էին սու Հապէշու կայսրն ուղղուած երկու կոնդակաց գաղղիերէն օրինակները, կը պատուիրէ իւրեան, որ անմիջապէս հաղորդէ առ Նորին Վմեն. Սրբազանութիւնն Անգլիոյ Տէրութեան և բուր ազգին շնորհակալութիւնն և խորին զգացմունքը նորա ի գործ դրած միջոցներուն վերայ, և կը յարէ թէ՛ սոյն մարդասիրական գործքով ոչ միայն զԱնգլիա, այլ ընդհանուր մարդկութիւնը պարտաւորած եղաւ: Սոյն խօսքերն մեծ արժէք մի ունին անշուշտ, և առաջին անգամն է զոր Հայ ազգը կը լսէ փառաւոր և մեծագորտէրութեան մի բերնէն ի շնորհս Վմեն. Տէր Կայսի Սրբազան Պատրիարքի Ս. Լթոռոյ:

Անցեալ օգոստոս ամսոյ Սիօնի հրատարակուելէն յետոյ ստացանք նամակ մի մեր Պահիրէի թղթակցէն, որ հետեւեալ կերպիւ կը պատմէ Վմեն. Սրբազան Պատրիարք Հօր ի Պահիրէ մտնելը ի չորրորդ աւուր օգոստոսի:

Աղիպտոս լսուելով, անմիջապէս հոն գտնուող ազգայինք կը փութան երկաթութիւնով մինչեւ ի կէս ճանապարհը,